

Նարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ
 Երևանի պետական համալսարան

**ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ
 ՄԻԱՎՈՐՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՆԵՐԻՄԱՍՏ**

Հոդվածում քննության է առնվում ներհմաստի տեսակներից մեկը՝ կանխենթադրույթը, որի առանձնահատկություններից է երկխոսությունից դուրս ներհմաստ արտահայտելու հատկությունը: Այն ընդհանուր և հենքային գիտելիք է, որը խոսողը և խոսակիցն ունեն կամ կարող են ենթադրել միմյանց, այլոց և շրջակա իրականության վերաբերյալ: Կանխամտածված ներհմաստի դեպքում կանխենթադրույթը միջոց է շեշտելու ոչ բացահայտ ներկայացվող, սակայն կարևորություն ունեցող տեղեկատվությունը, իսկ ոչ կանխամտածված ներհմաստի դեպքում այն թույլ է տալիս խուսափել խոսքում անտեղի մանրամասների հիշատակումից: Ուստի, խոսքային մտադրություններն են կանխենթադրույթները «որակում» որպես դիտարկություններ և ոչ դիտարկություններ: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև կանխենթադրույթի տեսակներին:

Քանալի բառեր. կանխենթադրույթ, կանխենթադրույթի տեսակներ, երկխոսություն, կանխամտածված ներհմաստ, ոչ կանխամտածված ներհմաստ, հենքային գիտելիք, խոսքային մտադրություն, իմաստաբանական և գործաբանական վերլուծություն

Կանխենթադրույթը, ի տարբերություն ներհմաստի այլ տեսակների, կարող է արտահայտվել առանձին լեզվական միավորներով՝ երկխոսությունից դուրս, ինչը հնարավորություն է տալիս լեզվաբանության մեջ այն դիտարկել իմաստաբանական և գործաբանական վերլուծությունների շրջանակներում: Իմաստաբանության տեսանկյունից կանխենթադրույթներ են համարվում այն հարաբերությունները, որոնք գոյություն ունեն նախադասությունների կամ նախադրույթների (propositions) միջև /Verschueren&Ostman, 2009: 147/: Հետևաբար, իմաստաբանական ուսումնասիրության հիմքում ընկած են նախադասության անմիջական կառույցը և դրանում բառացի արտահայտված իմաստները: Գործաբանության շրջանակներում կանխենթադրույթների և ասույթների միջև տարբերությունները դիտվում են ոչ թե նախադասության բովանդակության, այլ այն իրավիճակի տեսանկյունից, որի ժամանակ նախադասությունն արտաբերվել է՝ հաշվի առնելով այն մտադրությունները, մոտեցումներն ու վերաբերմունքը, որ ունեն խոսողն ու նրա խոսակիցը /Hockney, Harper, Freed, 1975: 31; Verschueren&Ostman, 2009: 147/:

Ըստ գործաբանական և իմաստաբանական դասակարգման՝ կանխենթադրույթի սահմանումները հիմնականում երկու ուղղվածություն ունեն:

Գործարանության մեջ կանխենթադրույթ է համարվում այն, ինչ խոսակիցները համարում են ճիշտ իրենց խոսքը կառուցելիս կամ այն հենքային համոզմունքը (background belief), որի հիման վրա կառուցվում է խոսքը /Levinson, 1983: 168; Yule, 2010: 133/: Իմաստաբանության մեջ կանխենթադրույթներն այն ընդհանուր գիտելիքներն են, որ ունեն խոսակցության մասնակիցները, այսինքն այն ամենն, ինչ արդեն հայտնի է խոսակցին, ինչի հիման վրա արտահայտություններն ու նախադասություններն իմաստ են ձեռք բերում և առանց որոնց խոսքի իմաստն անհասկանալի կլիներ /Stalnaker, 1978: 321; Hockney, Harper, Freed, 1975: 34/: Այսինքն, ունենալով խոսքի վերաբերյալ դատողություններ անելու հնարավորություն և ընդհանուր գիտելիքներ՝ խոսակիցներն առանց ավելորդ մանրամասնությունների հատուկ հիշատակման կառուցում են խոսքը և համատեքստի շրջանակներում հասկանում միմյանց: Այսպիսով, ի տարբերություն գործարանական կանխենթադրույթների՝ իմաստաբանական կանխենթադրույթները խոսողի կողմից դիտավորությամբ չեն արտահայտվում:

Կանխենթադրույթների բազմաթիվ օրինակների դիտարկման արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ կանխենթադրույթը հենքային գիտելիք է, որը խոսողը և խոսակիցն ունեն կամ կարող են ենթադրել **միմյանց, այլոց և շրջակա իրականության** վերաբերյալ: Ստորև ներկայացվող օրինակում խոսակիցների՝ միմյանց մասին ունեցած գիտելիքները թույլ են տալիս խուսափել բազում մանրամասների անհարկի հիշատակումից՝ ներակայվելով որպես կանխենթադրույթ:

A. You look a little pale. You are not afraid of the trip, I hope.

B. No. I guess I just didn't expect there'd be all these people.

A. ... As for the trip, you don't have a thing to worry about... (Specht, 1)

Եթե խոսակիցները միմյանց մասին ընդհանուր գիտելիքներ չունենային, երկխոսությունը, ըստ համատեքստի մեկնաբանելու դեպքում, մոտավորապես նման շարադրանք կունենար՝

A. *Now* you look a little pale *if we compare to other days*. You are not afraid of the trip *which you are going to take in a few minutes on ship, as you are going to visit Alaska*, I hope.

B. No. I guess I just didn't expect there'd be all these people *at the ship-station, who are going to leave for Alaska on this ship too*.

A. ... As for the trip *which you are going to take in a few minutes on ship, as you are going to visit Alaska*, you don't have a thing to worry about...

Հաջորդիվ մեջբերված օրինակը վերաբերում է այլոց մասին հենքային գիտելիքներ ունենալուն, քանի որ, ինչպես ցույց կտա երկխոսության զարգացումը, եթե խոսքը լեզվօգտագործման մասին է, նույնիսկ այն դեպքերում, երբ հիշատակվում է Webster ազգանունը՝ առանց նշելու անունը կամ մասնագիտությունը, մասնակիցները, հիմնվելով իրենց հենքային գիտելիքների վրա, հասկանում են, որ խոսքը հայտնի լեզվաբանի մասին է:

- A. My speciality is dogs that bite.
- B. Specialty.
- A. Pardon?
- B. *Webster* prefers “specialty”.
- A. That must be dangerous job. (Tyler, 40)

Ինչպես արդեն նշվել է, կանխենթադրույթը որպես հենքային գիտելիք վերագրվում է նաև շրջակա իրականության ճանաչմանը, ինչը կփորձենք ներկայացնել օրինակի միջոցով:

- A. He chop down *cherry tree*... What are you laughing at?
- B. *Cherry grows on tree*. I no believe.
- A. They do, though.
- B. See *apple tree*?

A. Loads of em. (Specht, 43)

Տվյալ օրինակում թեև խոսակիցը չգիտի, որ բալը ծառի վրա է աճում, սակայն գիտի, որ եթե ծառ է, ուրեմն անհերքելի է, որ պտուղը վրան է աճում, կամ եթե այդ բույսի անունը բալի ծառ է, ուրեմն պտուղը բալն է և այլն:

Հարկ է նշել, որ կանխենթադրույթը, ինչպես ներիմաստն առհասարակ, առավել հաճախ հանդիպում է երկխոսություններում: Այն ներիմաստ ենթադրություն է ասույթի հիմքում ընկած հենքային գիտելիքի վերաբերյալ, որի իսկությանն անդրադարձ է կատարվում երկխոսության կառավարման գործընթացում: Ուստի առավել ընկալելի և հեշտությամբ մեկնաբանելի է դառնում երկխոսության ժամանակ:

Երկխոսության ժամանակ կանխենթադրույթները հաճախ ավելի ակներև են դառնում շեշտադրման և առոգանության շնորհիվ /Renkema, 2004: 134/, երբ այդ կերպ ուշադրություն հրավիրելով որևէ միավորի վրա՝ փորձ է արվում ընդգծել դրա բացառիկությունը, առանձնահատկությունն ու յուրահատկությունը:

- A. How did you know that?
- B. Obvious. And I planned it that way. *I* leaked the process *myself*.
- A. You what?
- B. Sure. *I* traded the process for a little information *myself*. (Clavell, 111)

Կանխենթադրույթի հիմնական առանձնահատկությունը, որը տարբերակում է նրան ներիմաստի մյուս տեսակներից, ժխտման ժամանակ հաստատականության պահպանումն է: Այսինքն, անկախ այն հանգամանքից ասույթը հաստատում է արտահայտում, թե՛ ժխտում, նրանում առկա հաղորդագրությունը՝ կանխենթադրույթը, մնում է հաստատուն /Yule, 1996: 26/: Կանխենթադրույթի դեպքում արտաբերված նախադասության մեջ ներակայված մեկ այլ նախադասության ճշմարիտ լինելը պայմանավորված չէ արտաբերված նախադասությամբ, հետևաբար, եթե արտակա կառուցում նախադասությունը ժխտվում է, ներիմաստը դրանից չի փոխվում:

A. Was *your grandmother* like these Indians?

B. I'll tell you the truth. If you saw her in the Indian village you'd think she was one of them. (Specht, 103-104)

Դիտարկելով սույն օրինակը, տեսնում ենք, որ անկախ այն հանգամանքից խոսողը հաստատում, թե հերքում է իր տատիկի՝ հնդկուհիներին նման լինելը, այն փաստը, որ նա տատիկ ունի, մնում է անփոփոխ՝ He has a grandmother:

Կարևոր է ուշադրության արժանացնել այն հանգամանքը, որ կանխենթադրույթի բոլոր տեսակները խոսքում կարող են արտահայտվել դիտավորությամբ և ոչ դիտավորությամբ: Այսպիսով, լեզվաբանության մեջ տարբերակվում են կանխենթադրույթի որոշ տեսակներ, որոնք համախմբած և ամբողջական ներկայացնում է Ջ. Յուլը /Yule, 1996: 27-30/: Նա տարբերակում է կանխենթադրույթի հետևյալ վեց տեսակները՝

1. **Գոյաբանական կանխենթադրույթներ** (the existential presuppositions), որոնք իրենց կառուցվածքով վկայում են որևէ անձի, իրի կամ երևույթի գոյության մասին և ցույց են տալիս անձի կամ առարկայի պատկանելությունը:

A. I'll never give up *my children*.

B. They could be taken from you. (Baldwin, 296)

My children արտահայտությունն իր մեջ ամփոփում է այն իմաստը, որ խոսողը երեխաներ ունի, ըստ այդմ էլ հանդիսանում է գոյաբանական կանխենթադրույթ:

Որոշ լեզվաբաններ այս շարքին են դասում նաև շրջակա իրականության մեջ գոյություն ունեցող այնպիսի իրողությունները, որոնց գոյության և էության մասին վկայում են նրանց հատկությունները /Lyons, 1977: 602; Renkema, 2004: 135/:

A. We go and *pray*. **Gods must help**.

B. Have they ever helped before?

A. No, but *maybe we pray wrong*... (Niven&Barnes, 26)

Յուրաքանչյուրիս մեջ առկա է այն համոզմունքը, որ գոյություն ունի մի հզոր ուժ՝ Աստված, ում ուղղում ենք մեր աղոթքները, որպեսզի օգնություն ստանանք (Ex. pres. - There exists God, who people pray for help):

2. **Փաստարկային կանխենթադրույթներ** (the factive presuppositions): Այս տեսակը ներառում է այնպիսի լեզվական միավորներ, որոնք գործածվում են խոսքում փաստերը հաստատելու համար, ինչպիսիք են՝ to know, to realize, to be glad, to be aware և այլն:

A. I *wonder* what he done with that *four hundred and fifteen dollars*.

B. Well, he was a pretty sick man and likely he made a mistake. (Twain, 212)

Նմանօրինակ կառույցներում խոսողը հաստատում է այն փաստը, որ ինքը տեղյակ է օրինակում նշվող իրողության մասին, հետևաբար, ներակայվում է նման փաստի առկայության հանգամանքը՝ There are some four hundred and fifteen dollars: Ակնհայտ է, որ խոսողը ոչ դիտավորյալ է կան-

խենթադրում փաստերը, այլապես նրա խոսքը խոսակցի մոտ զարմանք կառաջացներ:

Հարկ է նկատել, որ գոյաբանական և փաստարկային կանխենթադրույթների տարբերությունը նաև այն է, որ առաջինի գոյությունն գլոբալ բնույթ ունի և հասարակության անդամների համար հաստատուն գիտելիք է, իսկ վերջինիս գոյությունը, անկախ փաստերի առկայությունից կամ բացակայությունից, ենթադրելի է և գիտելիք համարվել չի կարող:

3. **Ոչ փաստարկային կանխենթադրույթներ** (the non-factive presuppositions), որոնց շարքին պատկանող լեզվական միավորները ցույց են տալիս, որ ասվելիք խոսքը կամ իրողություն չէ, կամ էլ հնարավոր է, որ իրողություն չլինի՝ to dream, to imagine, to suppose, to seem, etc.:

A. There didn't *seem* to be any other reason. They'd never seen the boys before.

B. I *imagine* that it was in some kind of retaliation, for something other boys had done to them.

A. I *guess* that must be it. (Baldwin, 221)

Խոսքում գործածված «թվալ»՝ seem լեզվական միավորն ինքնին ցույց է տալիս խոսողի սեփական տեսակետը, որը կարող է չհամապատասխանել իրականությանը: Խոսակիցը նույնպես ներկայացնում է իր պատկերացումները՝ «պատկերացնել»՝ imagine բառով շեշտելով իր կողմից արված ենթադրությունների սուբյեկտիվությունը, որից հետո խոսողը, թեև համաձայնում է խոսակցի դիրքորոշման հետ, այնուամենայնիվ, «կռահել»՝ guess լեզվական միավորով շեշտում է, որ դա իր կարծիքն է:

Ուշագրավ է, որ դիտավորության առկայության դեպքում փաստարկային և ոչ փաստարկային կանխենթադրույթը անուղղակի խոսքային ակտերի միջոցով ակնարկելու տարբերակներից է, իսկ դիտավորության բացակայության դեպքում դա ուղղակի չեզոք արտահայտություն է:

4. **Բառաշարային կանխենթադրույթներ** (the lexical presuppositions), որոնք ցույց են տալիս ոչ ուղղակիորեն նշվող երևույթների սկիզբը, ընթացքը կամ ավարտը: Բառաշարային կանխենթադրույթներ են արտահայտում նման բառերը՝ to stop, to start, to begin, to go on, etc.:

A. I meant did you want *to stop seeing* me.

B. Why would I want *to stop seeing* you?

A. After how bad she made me look. (Tyler, 218)

Տվյալ օրինակում խոսողի կողմից գործածվող «դադարել»՝ to stop լեզվական միավորը հիմք է դառնում ենթադրելու, որ խոսելու պահին խոսակիցը ոչ թե տեսնում է իրեն, այլև նայում է, ուստի խոսքում ներակայված կանխենթադրույթը կարելի է սահմանել հետևյալ կերպ՝ She saw her or she was looking at her: Բացի այդ, օրինակում այն կարծես արտահայտվում է որպես ակնարկ խոսակցի կարծիքը ճշտելու համար:

5. **Կառուցվածքային կանխենթադրույթներ** (the structural presuppositions), որոնց դեպքում նախադասության կառուցվածքային ձևերն

ինքնին ենթադրում են կանխենթադրույթներ և հնարավորություն են տալիս բացահայտելու խոսքի ճշմարտացիությունը: Կառուցվածքային կանխենթադրույթները վերագրվում են *wh-* կազմությանը հարցական բառերին և արտահայտություններին՝ *why, what, what time, when, where, which, who, etc.*, որոնցով կազմված հարցական նախադասություններում ներակայվում է իրողության հաստատումը:

A. *What are you crying* about?

B. What? Nothing. You talk as though you didn't want us to be friends anymore.

A. Is that *what you think?* (Baldwin, 136)

Խոսողի հարցն իր մեջ ներառում է խոսակցի լաց լինելու հանգամանքը՝ անկախ դրա պատճառներից՝ Speaker B is crying, իսկ հնարավոր պատճառն իմանալուց հետո խոսողը դարձյալ հարցական բառի օգնությամբ փորձում է ճշտել այն իրողությունը, որը խոսակցին ստիպում է լաց լինել՝ Speaker B thinks of something, that makes her cry: Ուշագրավ է, որ, ըստ մեր դիտարկումների, դիտավորության տեսանկյունից առավել հաճախ հանդիպող կանխենթադրույթի տեսակը կառուցվածքայինն է:

Փաստական նյութի քննությունը հնարավորություն է տալիս գալ այն եզրահանգման, որ Ջ.Յուլի առաջարկած *wh-* հարցական բառերի շարքին կարելի է ավելացնել նաև *how, how long, how far, how often, how many, how much...* հարցական արտահայտությունների շարքը, որոնց միջոցով ձևակերպելով հարցը, խոսակցիցները փորձում են ճշտել եղելության ձևը, տևողությունը, հաճախականությունը, չափ ու քանակը և այլն:

A. You know, I have never thought much about money...There is always a monthly pay, a certain standard of living, so money doesn't mean much.

B. *How much does your father make?*

A. I don't know exactly. (Clavell, 179-180)

Ինչպես վերոնշյալ օրինակում, այստեղ ևս կանխենթադրույթն ընկալելի է դառնում հարցական բառի միջոցով՝ His father makes money:

6. **Հակափաստարկային կանխենթադրույթ** (the counter-factual presupposition), որի դեպքում այն, ինչ ասվում է, ոչ միայն ճիշտ չէ, այլ նաև հակասում է ճշտին: Այսինքն, նախադասության կառույցը թույլ է տալիս ենթադրելու, որ այն, ինչի մասին խոսվում է, իրողություն չէ, որն էլ խոսքի ներակայված իմաստն է:

A. ...Well, I can accept that. But tell me.

B. What?

A. ...*If you were listing the people you'd most like to watch sky-dive into a school of sharks, who might head the list?*

B. Ah. Evocatively phrased. (Niven&Barnes, 13)

Այն քերականական կառույցները, որոնք վկայում են հիշատակվող փաստերի ոչ իրողություն լինելու մասին, ներակայում են այն փաստը, որ

խոսքը մտացածին իրականության մասին է: Տվյալ դեպքում, ակնհայտ կանխենթադրույթ է այն ներակայված իմաստը, որ գոյություն ունի այնպիսի անձ, որն ընտրում է շնաձկների դպրոցի սուզվել պատրաստվող մասնակիցներին, սակայն հակափաստարկային կանխենթադրույթ է համարվում այն փաստը, որ խոսակիցն այն անձը չէ, ով զբաղվում է այդ աշխատանքներով, իսկ նրան տվյալ պաշտոնում ըղձական եղանակով ներկայացնելը վկայում է ոչ իրական լինելու մասին: Ուստի հակափաստարկային կանխենթադրույթ կարելի է համարել *He isn't the person who lists the people he'd most like to watch sky-dive into a school of sharks* ասույթը:

Ուսումնասիրելով բավականաչափ փաստական նյութ՝ եկել ենք այն եզրահանգման, որ Ջ.Յուլի առաջարկած վերոնշյալ վեց տեսակների շարքին կարելի է դասել կանխենթադրույթի ևս երեք խմբեր, որոնք նույնպես հակված են խոսքում դիտավորյալ կիրառվելու:

1. Առաջին խմբում, որն անվանել ենք **կրկնորդային կանխենթադրույթներ**, կարելի է ներառել կրկնակի գործողություն ցույց տվող այնպիսի բառեր կամ արտահայտություններ, ինչպիսիք են՝ *too, again, always, seldom, often, usually, once more, once again, one more time, for many times, as usual, etc.*, կամ տարբերակում ցույց տվող այնպիսի բառեր կամ արտահայտություններ, ինչպիսիք են՝ *another, the other, this one, that one, etc.*:

A. Would you like **another** cigarette?

B. No, thank you. (Clavell, 94)

Մեկ այլ ծխախոտի առաջարկը վկայում է այն մասին, որ տվյալ երկխոսական իրավիճակում առաջին անգամ չէ, որ խոսակցին ծխախոտ է տրվել: Հետևաբար, առկա է հետևյալ կանխենթադրույթը՝ *Speaker A or someone else has already given one or more cigarettes to Speaker B*:

A. Here you had a set-to.

B. The son of that man searched me **again**. (Clavell, 22)

Օրինակում կրկին անգամ փնտրելու փաստը հիմք է դառնում եզրակացնելու, որ առաջին անգամ չէ, որ խոսակցին փնտրում են՝ *The son of that man had searched him before*:

Այս շարքին կարելի է դասել նաև այնպիսի կառույցներ, որոնցում առկա են համեմատություն կամ նմանություն ցույց տվող լեզվական միավորներ՝ *like, as, as...as, not so...as, etc.*:

A. Did you notice that boy with the motorcycle?

B. It's crazy to ride a motorcycle **on a day like today**. Crazy to ride any day.

A. We could do that...

B. If I felt we were in slightest danger I'd have pulled over long ago. (Tyler, 3)

Խոսքում առկա *like* լեզվական միավորը թույլ է տալիս համեմատել տվյալ օրվա եղելությունը մեկ այլ օրվա հնարավոր կատարվելիք իրողության հետ, որի արդյունքում, որպես ներակա տեղեկատվություն՝ ի հայտ է գալիս հետևյալ կանխենթադրույթը՝ *Today motorcycle has been ridden in a crazy (dangerous) way*:

2. Երկրորդ խմբում, որն անվանել ենք **հականշային կանխենթադրույթներ**, կարելի է դասել այնպիսի լեզվական միավորներից ի հայտ եկող կանխենթադրույթները, որոնք հաստատական նախադասություններում ընկալելի են դառնում հականիշ լինելու շնորհիվ և ցույց են տալիս փաստացի իրողություններ:

A. We'll give them a few minutes, then get out of this bloody place.

B. At least let's **open the door**. (Clavell, 197)

Տանկացած կառույցում, որտեղ «բացել»՝ open բառը կիրառվում է իր ուղղակի իմաստով, ցույց է տալիս, որ նախադասության խնդիրը, որին տվյալ կառույցում բնորոշ է բացվելու հատկությունը, գտնվում է փակ վիճակում: Այս իրողությունը իմաստի ընկալման գործընթացում հանդես է գալիս որպես կանխենթադրույթ՝ The door is closed: Նման դեպքերում ոչ միայն open-close, այլ նաև շատ այլ հականշային խմբեր ինքնին հասկանալի են դառնում թե՛ խոսակիցներին, թե՛ տվյալ լեզվին տիրապետող յուրաքանչյուրին:

3. Կանխենթադրույթների շարքին կարելի է դասել նաև ցանկությունների, մաղթանքների, խորհուրդների և առաջարկների այնպիսի արտահայտումներ, որոնք հաճախ զուգակցվում են ոչ իրական լինելու հանգամանքը շեշտող բառերով՝ to wish, to want, to advise, to recommend, to suggest, to offer, to propose, had better, would rather, etc.: Կանխենթադրույթների այս տեսակն անվանել ենք **մտացածին/երևակայական կանխենթադրույթներ**:

A. I **wish** he'd get here if he's coming.

B. I **wish** we knew what the hell happened with Cheng San. (Clavell, 259)

Վերոնշյալ օրինակում խոսողն ու խոսակիցն արտահայտում են իրենց ցանկությունը, որը խոսողի դեպքում նաև մաղթանք է եկվորի համար: Սակայն wish բառն արդեն իսկ հուշում է, որ այն անձը, ում շուրջ ծավալվում է երկխոսությունը, նրանց հետ չէ՝ He isn't there: Խոսակցի խոսքում երկու կանխենթադրույթ կա, այն, որ հիշատակվող անձի հետ ինչ-որ բան է պատահել՝ Something happened to Cheng San, և, որ իրենք ոչինչ չգիտեն պատահածի մասին՝ They know nothing about him:

Այս խումբը կարելի է լրացնել նաև այն լեզվական միավորներով, որոնք ցույց են տալիս երկխոսության խոսակիցների ակնկալիքները կամ նրանցից ակնկալվող գործողությունները, ինչպես օրինակ՝ to expect, to look forward, to hope, to be eager, to be going, etc.:

A. I am **looking forward** to finishing it and having it read, especially if I may say so ...

B. Thank you. I suppose I must get back to my physicists.

A. Ah, I **am going to** have a drink. Will anyone join me?

B. Sure! (Baldwin, 145)

Տվյալ օրինակում խոսողն ակնկալում է ավարտել և կարդալ իր պատմվածքը, ինչից կարելի է հասկանալ, որ աշխատանքը դեռ ավարտ-

ված չէ և ամբողջական տեսքով դեռ չի ներկայացվել: Երկխոսության թեման կտրուկ փոխվում է և խոսողը նշում է, որ պատրաստվում է խմել՝ to be going լեզվական միավորում ներակայելով այն կանխենթադրույթը, որ ինքը դեռ չի խմել և նոր է պատրաստվում դա անել:

Այսպիսով, Զ.Յուլի առաջարկած կանխենթադրույթների վեց տեսակներին մեր դիտարկումների արդյունքում ավելացնելով ևս երեք նոր տեսակներ և դիտարկելով կանխենթադրույթները որպես դիտավորյալ և ոչ դիտավորյալ գործածվող լեզվական ձևեր՝ եկել ենք այն եզրահանգման, որ խոսողի խոսքային մտադրություններն են կանխենթադրույթները «որակում» որպես դիտավորություններ և ոչ դիտավորություններ: Այսինքն, խոսողը միտումնավոր է գործածում այն լեզվական միավորները, որոնք կանխենթադրույթներ են արտահայտում: Փաստական նյութի քննությունը վկայում է, որ խոսողը դիտավորությամբ է գործածում այն կանխենթադրույթները, որոնց ներիմաստը խոսակցին անձանոթ տեղեկատվություն է կամ որոնց կիրառմամբ նա ցանկանում է ինչ-որ բան ակնարկել կամ «հասկացնել» խոսակցին: Այս հիմնավորմամբ դիտավորությամբ արտահայտված կանխենթադրույթներն անվանել ենք *կանխամտածված կանխենթադրույթներ*: Այս դեպքում ներիմաստը՝ կանխենթադրույթը, խոսողը հայտնում է անուղղակիորեն, քանի որ արտակա կառույցը այլ միտք է հայտնում, իսկ կանխենթադրույթում ամփոփված իմաստը լրացուցիչ տեղեկատվություն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Hockney D.J., Harper W.L., Freed B. Contemporary Research in Philosophical Logic and Linguistic Semantics. Boston: Springer, 1975.
2. Levinson S.C. Pragmatics. Cambridge: Cambridge University Press, 1983.
3. Lyons J. Semantics. Cambridge: Cambridge University Press, 1977.
4. Renkema J. Introduction to Discourse Studies. USA: John Benjamins Publishing, 2004.
5. Stalnaker R. Assertion // *Syntax and Semantics: Pragmatics*, v. 9, Cole P. (ed.) New York: Academic Press, 1978.
6. Verschueren J., Ostman J.O. Key Notions for Pragmatics. USA: John Benjamins Publishing, 2009.
7. Yule G. Pragmatics. Oxford: Oxford University Press, 1996.
8. Yule G. The Study of Language. Cambridge: Cambridge University Press, 2010.
9. Baldwin J. Another Country. New York: Dell Publishing Co., 1962.
10. Clavell J. King Rat. USA: Dell Publishing Co., 1962.
11. James H. The Turn of the Screen, Daisy Miller. New York: Dell Publishing Co., 1965.
12. Niven L., Barnes S. The Barsoom Project. New York: Berkley Publishing, 1989.

13. Specht R. Tisha. USA: Bantam Books, 1976.
14. Twain M. The Adventures of Huckleberry Finn. New York: An Apple Paperback, 1989.
15. Tyler A. The Accidental Tourist. New York: Berkley books, 1978.

Н. МАНУКЯН – Пресуппозиция как имплицитность языковых единиц. – В статье рассматривается пресуппозиция как один из типов имплицитности, особенностью которой является возможность ее проявления вне диалога. Это общие и базовые знания говорящих друг о друге, о других и об окружающей действительности. В случае преднамеренной имплицитности, пресуппозиция служит средством подчеркивания неявной, но важной информации, в случае непреднамеренной имплицитности, пресуппозиция, представляющая базовые знания говорящих, позволяет избежать упоминания некоторых деталей в разговоре. В статье также рассматриваются типы пресуппозиции.

Ключевые слова: пресуппозиция, типы пресуппозиции, диалог, преднамеренная имплицитность, непреднамеренная имплицитность, базовые знания, вербальные намерения, семантический и прагматический анализ

N. MANUKYAN – Presupposition as a Type of Implicit Meaning Codified in Linguistic Units. – The present paper deals with one of the types of implicit meaning, the presupposition, one of the peculiarities of which is the property of implicating out of dialogue. It's general and background knowledge which the speakers have or can imply about each other, other people and the environment. As an unintentional implicit meaning, presupposition helps us to avoid voicing unnecessary details. In case of intentional implicit meaning, presupposition is a means of emphasizing not explicit but important information. It depends on verbal intentions of a speaker to qualify presupposition as intentionally or unintentionally expressed implicitness. The paper also touches upon the types of presupposition.

Key words: presupposition, types of presupposition, dialogue, intentional implicitness, unintentional implicitness, background knowledge, verbal intention, semantic and pragmatic analysis

Ներկայացվել է՝ 04.03.2019
Երաշխավորվել է ԵՊՀ Անգլերենի թիվ 2 ամբիոնի կողմից
Ընդունվել է տպագրության՝ 25.04.2019